ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

ՆՀ-52-Ա **2026թ. ապրիլի 23**

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆԿ-20-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և ձևակերպման օրինակելի ձևը, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց ենթակա մարմիններում ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրության վարման կարգը սահմանելու մասին» N 272-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետը.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղար Անդրանիկ Տերտերյանին:

2. Ուժը կորցրած ճանաչել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովում ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձ նշանակելու մասին» ՆԿ-20-Ա կարգադրությունը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ